ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/8892-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-990-24.12.2024-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Առաջարկվում է նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն» բառով՝ հաշվի առնելով, որ նախագծում կատարվում է միայն մեկ փոփոխություն:

2. Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում «պահանջները չեն խոչընդոտում» բառերը փոխարինել «պահանջները չեն տարածվում» բառերով, իսկ «փոխարկմանը» բառը՝ «փոխարկման դեպքերի վրա» բառերով՝ հաշվի առնելով հասկացությունների տարբեր օրենքներում միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունը:

3. Վրիպակը շտկելու նպատակով առաջարկվում է 2-րդ հոդվածով նոր լրացվող Օրենքի 33.1-ին հոդվածի 4-րդ մասում «նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը» բառերը փոխարինել «նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դիմումը» բառերով:

4. Հաշվի առնելով, որ նախագծի 2-րդ հոդվածով նոր լրացվող Օրենքի 33.1-ին

հոդվածի 3-րդ մասում ընկերության մասնակցի կողմից ներկայացվում է «լրացուցիչ ավանդ»-ի ներդրման հիման վրա իր բաժնեմասի անվանական արժեքի ավելացման դիմում՝ առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով նոր լրացվող Օրենքի 33.1-ին հոդվածի 5-րդ մասում «կամ» բառը փոխարինել «լրացուցիչ ավանդը, իսկ» բառերով, «փոխատուի» բառից հետո լրացնել «դեպքում՝» բառը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Առաջարկվում է նախագծի վերնագրում «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով ՝ հաշվի առնելով, որ նախագծում կատարվում է միայն մեկ լրացում:

2. Առաջարկվում է բաժնետերերի նախապատվության իրավունքի կիրառության դեպքում փոխատուի իրավունքների շրջանակը հստակեցնելու նպատակով՝ նախագծի 1-ին հոդվածով նոր լրացվող Օրենքի 35.1-ին հոդվածի 4-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Ընդ որում նախապատվության իրավունքի կիրառման դեպքում Ընկերությունը հատուցում է միայն փոխատուի վնասները՝ ազատվելով պարտավորությունը բնեղենով կատարելուց»:

3. Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերի «:» փոխարինել «.» կետադրական նշանով:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Առաջարկվում է 1-ին հոդվածում «109-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «3-րդ մասի 5-րդ կետում «:» նշանը փոխարինել «.» նշանով» բառերով՝ հաշվի առնելով, որ հոդվածի 3-րդ մասը լրացվում է նոր 6-րդ կետով: :

2. Առաջարկվում է 4-րդ հոդվածում «Եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերը փոխարինել «Եզրափակիչ մաս» բառերով::

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի վերնագրերում «Եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերը փոխարինել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» բառերով:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ